ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ **ք.Եղեգնաձոր**

N 55 **<<13>> հուլիսի 2017թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ, ԳԼԱՁՈՐԻ ԵՎ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՆՈՐԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 59-Ա որոշման պահանջներով՝

Որոշում եմ .

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենիի, Գլաձորի և Եղեգիսի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակել 2017 թվականի նոյեմբերի 5-ին:

2.Սահմանել սույն որոշման 1-ին կետով նախատեսված համայնքների ցանկը և այդ համայնքներում նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորությունների ստանձման ժամկետները՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 25-ին :

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի

2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 55 որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

հ/հ	Համայնքի անվանումը	Ընտրողների թիվը	Նորընտիր ՏԻՄ-երի լիազորությունների ստանձման ժամկետները	
			Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
1	Արենի	**8633**	Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը	Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը
2	Գլաձոր	**4609**	Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը	Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը
3	Եղեգիս	**5014**	Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը	Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**